# Վ Ճ Ռ Ե Ց

1. «Ամարաս-Յուս» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ կողմից վերջինիս և «Ամարաս-Յուս» ՍՊ ընկերության միջև 19.08.2020 թվականին կնքված թիվ 02/10 ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2-20 ծածկագրով պայմանագրի 16.01.2023 թվականի միակողմանի լուծումը և «Ամարաս-Յուս» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 տարի ժամկետով ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲ ընկերության՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲ ընկերության և «Ամարաս-Յուս» ՍՊ ընկերության միջև 19.08.2020 թվականին կնքված թիվ 02/10 ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2-20 ծածկագրով պայմանագրի 16.01.2023 թվականի միակողմանի լուծումը և «Ամարաս-Յուս» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 տարի ժամկետով ներառելու մասին որոշումը:

2. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲ ընկերությունից հօգուտ «Ամարաս-Յուս» ՍՊ ընկերության բռնագանձել 80.000 (ութսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես «Ամարաս-Յուս» ՍՊ ընկերության կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Թիվ ԵԴ/4396/02/23 քաղաքացիական գործով Դատարանի 07.02.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանել մինչև վճռի կատարումը:

4. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով պարտապանի հաշվին:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակվելու պահից մեկամսյա ժամկետում:

**ԴԱՏԱՎՈՐ** **ԼԻԼԻԹ ՍԱՂՈՅԱՆ**